

ՆՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԵՐ

ՊԵՏԱԿԱՆ

Զինվորագրութեան բերումով՝ հայ աղդին մեջ դասակարգաչին նախկին շերտավորումները, — հարուստ ու աղքատ — իսպառ վերացան, աւելի տալով, սակայն, բազմաթիւ նոր դասակարգութեանց: Թղթադրամն էր, որ զխաւսը անջատիչ պարագան կհանգիսանար հարուստին, ու աղքատին միջև, իսկ հիմա ան դարձեր է հարցական քանակութեան մը ու որպէս ապրանք՝ ամենեն աժանը:

Պատմութեան բեմեն անհայտանալով սա զույգ իրարամերժ դասակարգերը, շատ բնական էր, որ հետեւին պիտի տանէին նաև իրենց նվիրված բոլոր հատորները, ճամփաբանալու համար նորապուշ հատորներու, որ գալու էին պարզարանելու սա նոր բարձր դասակարգերու բարդագուշ հարցերը:

Ահա գիտական այդ նոր ուղղութեան առաջին հատորը կազմելու կուգա ներկա ուսումնասիրութեանս:

ՀԱՌԱՒԱՐՈՒՄԵՐ. — Ժամանակագրական կարգով՝ ճառախոսներու դասակարգը ծնով առաջին անգամ ու մնաց մինչև վերջ՝ իբրև դասակարգ կուս՝ և իր շահերուն գիտակ: Զորակոչը հայտարարելուն՝ այս մարդիկ կարծեցին, թե ոչ մեկը պիտի արձագանքե կոչին, այդ իսկ պատճառով սկսան «ինտենսիվ» կերպով հորդորել, որ երթան զինվորագրվին: Բայց

քիչ և տքը, երբ տեսնվեցավ, որ իրենց սպասածին հակառակ՝ շատերը փութացին զորանոցն երթալ, հանկարծ մեղմեցին եռանդնին. վասնզի երևցավ, որ եթե հորդորի այդ թափը շարունակելու ըլլան, քիչ վերջը ոչ ոք սրիտի մնար զորանոցնն դուրս՝ իրենց ճառերը լսելու համար, ու իրենց պաշտոնը վերջացած ըլլալով՝ պիտի նմանեին այն մարդուն, որ կացինն առած իր տակի ճշուղը կկտրու:

Սակայն պիտի ըսեմ, որ հիշյալ դասակարգի իդեոլոգներն ունեցան այն հեռատեսությունը, որ բոլորը շղթկեցին զորանակատը, ու չեմ կասկածիր, որ պիտի ունենան նաև այն խիզախությունը, որ օր մըն ալ ուժով ետ պիտի կեցնեն ինքնաբերաբար ճակատը մեկնողները՝ իրենց, լսողներու թիվ մը ապահովելու համար:

«Տրամադրության տակիներ» — Այս դասակարգը կբաղկանա գլխավորապես ինտելիգենտներն, որոնք ինքզինքնին դրեր են Ազգային Խորհուրդին «տրամադրության տակ»:

Ինչպես Պարսկաստանին մեջ քաղաքական հանցավորները «բաստ» կմտնեն կոնսյուլատներ՝ պատիժեն ազատվելու համար, անոնք ալ դիրենք Ազգային Խորհուրդին դուռն են նետեր՝ պարտականութենեն ազատվելու համար: Այս դասակարգի մասին շատ հուստես եմ ես, բայց Ազգային Խորհուրդը որովհետև դեռ կհուսա, թե անոնցմե կրնա բան մը դուրս գալ, այդ առթիվ կըսեմ. — ո՛վ Ազգային Խորհուրդ, հավերք 21 օր կնստին հավկիթին վրա ու եթե այդ ժամանակվա մեջ բան մը դուրս չեկավ, հավկիթները փշացած սեպելով՝ վեր կելնեն սրդողած, իսկ դուն՝ սա երեք ամիս է դրեր ես «տրամադրությանդ տակ», նստեր ու դեռ կհուսաս, որ բան մը պիտի ելնու անոնցմե...

Այս մարդիկ դժվար է ճանչնալ զգեստեն: Անոնք որոշ տարազ մը շունին, կըրջին մերթ «շինել»-են ներս, մերթ՝ դուրս: Փողոցին մեջ երկու քայլ կնետեն՝ երրորդին վրա ետևը կգառնան՝ պաշտոն մը գտնելու հույսով:

Զինվորադիր տաշաններուն առջևն մատի ծայրերուն վրայով կամացուկ մը կանցնին ու հեռանալով՝ կրունկնին գետինը կղարնեն և կպոռան, որ Ազգը չի ուզեր իրենցմե օգտվիլ: Հաճույքով կդիտեն փողոցն անցնող նորակոշներն ու սրտի խորերին կափսոսան, որ իրենք ալ այդպես

հասարակ շին ծնվիր, անոնց շարքը մտնելու համար: Եվ ինք-
զինքնին խիստ թանկ գնահատելուն համար, կնամանին այն
հաղարանոցներուն, որոնք մանրուքի պակասին համար շին
մանրվիր ու միանգամայն անգործածելի կմնան՝ սակայն
միշտ Ազգային Խորհուրդին «տրամադրութեանը տակ»: Հիշ-
յալներն ավելի շատ ապրիլ կուղեն, քան մեռնիլ:

Մերերու դասակարգ.— Ասոնք քառասունն վեր մարդիկ
են, որոնց նախախնամութեանը թող տալով, որ ժամանակե
առաջ ծնվին, զրկե՞ր է առ աղղն ունեցած «քաղցր պարտա-
կանութեանը» կատարելու հնարավորութենեն: Կզգուշանան
սաստիկ քան մը զոհելու աղգին, վախնալով, որ Ազգային
Խորհուրդը շրնգունի, սեպելով դայն Կայնեի զոհը: Ու կպը-
տըտեն պարտական, միշտ «եթե կրնայինք, պիտի զոհվեինք»
նշանաբանը բերաններուն:

Անգավակ հայրեր.— Այս դասակարգն ամուսնացած շա-
փահասաներն են, որոնք իրենց ամուսնութեան երկար ու ձիւ
տարիներուն մեջ, շին հաջողած ժառանգ մը ունենալ, այժմ
ազգին նվիրելու պատրվակին տակ՝ ամենայն դիշեր աս-
տուծմե որդի մը կապերսեն, նման այն անշնորհք հեղինակ-
ներուն կամ անձար դերասաններուն, որոնք, որովհետև շին
սիրվիր ու շին կարողացվիր, այդ պատճառով ամենայն առա-
տաձևութեամբ բարեգործական նպատակներու կնվիրեն
իրենց խողն ու դիրքը:

Վերոգրյալ դասակարգերի դատ կան նաև խել մը այլ
դասակարգեր. ասոնք են բաղմորդի հայրեր, արձանագրող-
ներ, ասպունի հաղարայեաներ, հազնվածներ, ճակատ մեկ-
նողներ, կոմիսարներ և այլն:

Բաղմորդի հայրերն անոնք են, որոնք դինվորագրութեան
տարիքին մեջ պոնված հինգ որդիներեն մեկը վերցնելով,
բաղմամարդ միտինգի մը կամ թերթի մը մեջ, շխկացնելով
աղգին կնվիրեն, նման եկեղեցիի մեջ խոշոր արծաթ մը
գանձանակը նկատող հարուստ մեծատան:

Արձանագրողները կասրին խմբերով, դիվանատանց մեջ
և հաճախ թվով կպերադանցեն արձանագրվողները: Ասոնք
կարձանագրեն ու դեպի ճակատը կհրեն զինվորները, սակայն
մեծ զգուշութեան ի գործ դնելով, որ շսալթաքին ու հանկարծ
իրենք ալ հետներս ռազմաբեմը իյնան...

Այառնի հաղարապետներն անոնք են, որոնք իբրև հա-
սարակ զինվորներ, անհարմար են ու ակնդետ կսպասեն հա-
զարի մը կազմելուն, անոնց գլուխն անցնելու համար: Եվ
որովհետև մեր մեջն ավելի շատ հաղարապետութեան համար
մարդիկ կան, քան զինվորութեան, այդ պատճառով մեկ զին-
վորին երկու հաղարապետ կիյնա ու հազար մը քնավ շի
կազմվեր, որ այս ապառնի հաղարապետներեն գեթ մեկը
ներկա դառնա: Հաղարապետ կոչելին առավել ևս բարվոք
կրէլար մեկ հաղարարորդապետներ կոչել ղանոնք:

Հագնվածներ կկոչվին բոլոր տնոնք, որոնք «շինել» են
հագած ու ճակատը մեկնողի երևույթն ունին: Ասոնք երկու
դասակարգի կպատկանին. առաջինն անոնք են, որոնք շու-
կային մեջ հարմար գոհասացու մը շղտնելով՝ բարվոք սե-
պած են զինվորական «շինել»-ներով ծածկվիլ, երկրորդն
անոնք են, որոնք քանի մը անգամ քաղաքացիական գոհս-
տով օրիորդի մը առաջարկութեան ընելին զկնի, երբ մերժ-
ված են՝ անգամ մըն ալ «շինել»-ով կուզեն փորձել:

Ճակատ մեկնողներու դասակարգը վերջանալու վրա է:
Այս դասակարգը միապետութեան արդյունքն էր, որու տա-
պալումով ալ վերջ դրավ ճակատ մեկնելը:

Ասոնցմե դատ կմնա մեղ հիշատակիլ նաև «կոմիսարնե-
րու» դասակարգը, որոնք կիշխեն իրենց սպասավորներուն,
սպասուհւոց և խոհարարներուն վրա... միայն, ու քաղաքա-
ցին առտուն դարձնելուն մինչև ցուցամասը քունքին երկար
շմտածն, շի կրնար հիշել իր կոմիսարի անունը: Ասոնց թիվը
շատ է, քաղաքներու թիվնն ավելի. և ան, ով կփափագե որ
անոնք գաղբին պաշտօններ իրար ձեռքն խլելի, պիտի աշ-
խատի քաղաքներու թիվը բազմապատկել՝ տրամադրելի տե-
ղեր բանալու համար. վասնզի անոնք կոմիսար ըլլալու պայ-
մանով են ծնվեր և սրիտի տեղավորվեն. միայն ապագային
համար կարելի է խնդրել հայ մայրերեն քիչ մը... սլոտիկ
մարդիկ ծնիլ, այնպիսիք, որոնք պատերազմի տեսնները
բանի մը պետք գան...

Կան ազգեր, որոնք սրտի ամբողջ խորհրեն «ա՛խ» կքաշեն մեծ մարդ մը ունենալու համար, սակայն պարագան այնպես մըն է բիրեր, որ այսօր հայ ազգը կսկիծով կտեսնե, որ պզտիկ մարդ մը շունի իր մեջը:

Տե՛ր, տե՛ր, մանրե այդ մարդիկ՝ նոր աշխարհ զրկե. տե՛ր...

Տե՛ր, շէ՞ երեկ էր, որ կլուբին մեջ խոսվեցավ «ներկա մոմենտի» մասին. շսեցի՞ր որքան ծանր էր մեր կացութիւնը. շտեսա՞ր, որ մենք անդունդի ծայրին ենք, որ մեր փրկութիւնը ճակատը պահելու մեջն է...

Տե՛ր, դուն զինվոր զրկե ու Հայաստանն ազատի տա՝ ճիկներեն՝ ալ մի խառնվիր: Ես մարախի նման իշխաններ կհանեմ ազատված երկիրը կառավարելու համար, տե՛ր...

Կազաչեմ, ո՛վ տեր, բան մը ասոնց զլոխեն պակսեցոր ու բան մը սրտին վրա ավելցոր, նաև բան մը ասոնց տրտաքինեն կտրե ու ներքինին կցան տուր: Ու եթե կտրելի է, պզտիկ բան մըն ալ ասոնց էսթենեն հանե ու մեր կարտ... Ազգին սուր...

Ու այս բոլորն ըլլալէ ետքը, քեզի վաչկի է փառք, պատիվ հավիտյանս ամեն:

1918

ՅՈԹՆ ԱՆԳԱՄ ԶՈՂՎԱԾ ԶԻՆՎՈՐ ՄԸ

Հայաստանի զորակոշեն երկու ամիս հետո էր, որ կհանդիպելի երիտասարդ բարեկամիս: Զարմանքս պահել չկրցա, վասնզի ես, որ աղեկ կճանաչելի զինքը և գիտակ անոր անհամբեր ազգասիրութեան ու հախուռն անձնվիրութեան— կսպասելի, որ վաղուց արդեն զոհված պիտի ըլլար ան՝ Հայաստանի հռավոր մեկ ճակատին վրա անշիրիմ ու մենավոր:

Աչքերս կճմլեմ... սակայն ան է տուաչիս: Կուզեմ շհավատալ աչքերուս՝ ըլլար: Ուստի իրեն կմոտենամ խոսելու՝ միշտ սակայն այն թերահավատութեամբ, ինչ թերահավատու-

Թշամբ որ Հիսուսին աշակերտները մերձեցան երեք օրեն հարուժյուն առած իրենց վարդապետին...

— Գուն ա՞ն էս, որուն համար կըսեին, թե պիտի զոհվիս ազգին՝ թե՞...

— Լոն դուն ալ, տատվածդ սիրես՝ ու մի ծաղրեր դիս. մեր ազգին գլուխներն աչի օրն են հասեր, որ զոհ մըն ալ շեն կրնար բնել, շնայած որ հազարավոր նոխաղներ իրենց հրամանին կտպասենու— Հիմա, ինձի նայի: Զորածոզոգի առաջին խկ կոչին, որ եղավ տակ երկու ամիս առաջ, ես արցին օրատրաստել էի, ու սաքի ելա:

... Մ՛յր այգոյիս շատոյ,— ըսավ կինս անդիեն:— Ազգիս համար զոհվելու, ըսի ու թոա, առանց հրածեշտ խկ առնելու պղտիկիս, որուն՝ ազգին հետս ամենեն շատը կսիրեի աչս աշխարհին մեջ: Շիտակ Աստեչնայա փողոց № 3-ը գացի, ուր կնասեր Զինվորապիւր Ատյանը, ու զոհվեցա, ք...ք...ք... արձանագրվեցա, պիտի բսիի Հա, տեսնեմ, իրիկուն՝ փոխանակ ճակատը դրկելու ինձի՝ դրկեցին դարձյալ տունս, ուր բնավ զինվորի պետք չկար, վասնզի արդեն տասնուհինգ օրն ի վեր իմ և կնկանս միջև հաշտություն էր կայացեր... Երկու օր տունը նստելի զկնի, երրորդ օրը թերթ մը կարդացի, որուն մեջ ապիստարմ օյնություն կուզվեր Հայաստանեն: Սիրտս շղիմացավ. նորին Ապտեչնայա № 3-ը գացի, մտածելով, թե զուցե անունս աշքատու տեղ մը շէ դրված առմարին մեջ, կամ մատիտով է եղեր ու ավրվեր: Ահա աչս մտածելով դիվանատունը կմտնեմ, բայց դիվանապետը պաղ կերպարանքով մը, նիշտ աչնպիս, ինչպիս Հեղի քահանայապետը տաճարին մեջ Աամվելին դարձեր էր, ինձի դարձավ ու ըսավ.— Գնա գավաղս, տունդ նստե, մենք քեզի շենք կանչած...— Բայց սիրտս շհամբերեց. խնդրեցի անգամ մըն ալ արձանագրել ինձի՝ ու երկրորդ անգամ զինվոր դարձած՝ կնկանս վրա բայեցի... Ասկե վեց թե չոթն օր հետո էր, երբ լույս կտեսներ կոչը, ուր բոված էր, թե աչն կնիկներն, որք իրենց մարգոց տունը կտրահեն, դավաճան են: Կինս ինձի դուրս ըրավ տունեն, բայց զորանոց ներս շառին ինձի: Գիշերն փողոցն անցուցի ու առտուն գացի... նորեն արձանագրվեցա: Ասոր հետ համընթաց՝ ամենայն օր Զինվորակոչ դիվանին «Ազգ»-երն արևին առաջ դուրս կուգային աչսպես՝

— Տասն օր վերջը կսկսի հայաստանցիներու զորակոչը, պատրաստ եղիք:

Հաջորդ օր.

— Ինն օր հետո կսկսի հայաստանցիներու զորակոչը, պատրաստ եք:

Օր մը հար:

— Ութն օր մնաց զորակոչին հրամանը դուրս գալուն, հա, գիացիք:

Եվ այսպէս յոթն անգամ:

Ես, հարկավ, որպէս պարտքիս գիտակ քաղաքացի, յուրաքանչյուր անգամ արձագանքած եմ կոչերուն՝ արձանագրովելով: Պիտի ըսես արձանագրովելով Հայաստանը չի փրկելիք. — ի՞նչ ընեմ, ախպար, ի՞նչ ընեմ հայր, մեզի արձանագրովիլ կիցնա, անոնց ալ դրկելը Կրտսե ազգին համար դեռ շեռ զոհակեր. ես յոթն անգամ պառկեցա զոհի սեղանին վրա, ու մեկը դանակը շքսեց վզիս. — է հիմա որ կպտտիմ կենդանի, մեղավոր եմ, ըսե՛:

— Գիտեմ, գիտեմ, — պատասխանեցի իրեն, — միայն կղարմանամ, թե ինչպէս կըլլա, որ յոթն անգամ կզոհվես, ու այսօր ազգը դրացել է շքանշան մը կախել կուրծքեդ. ապերախտութիւն:

— Պարզ ապերախտութիւն, այո՛, ուրիշ ի՞նչ կրնա ըլլալ, — ըսավ բարեկամս ու շոշափեց սիրտը, ուր բան մը կախված ըլլալ կկարծեր:

— Այդպէ՛ս, այդպէ՛ս: է, ըսել է հիմա բան մը շեռ ընեք, — վերջաբանի եղանակով ըսի ես ու կոպտրաստովեի հրաժեշտ տալ բարեկամիս:

— Այսինքն ինչպէ՛ս, բան մը շքնել... Հարկավ չի կարելի, երբ մեր կենաց-մահու խնդիրն է դրված մեջտեղը: Իրավ է, թեև ցարդ դործի շեք կանչված, բայց ինչ ըսել է, մենք ալ մարդ ենք... Աստված դիտե, որ սա երկու ամիս է քուն շունիմ, գիշերը մինչև լույս կհայհոյեմ ու կսպառնամ թշնամուն, որ շիտատե դինադադարը: Երազիս մեզ կմարդովեմ անդադար: Հիմա, արթնութեան մեզ իսկ նթե հրացանը ձեռիս ըլլար՝ պիտի դնեի ուսիս ու քայլելի, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ... Եթե ուսիս ըլլար՝ պիտի վար տանեի ու դեպի թըշնամին ուղղեի, մե՛կ-երկո՛ւ... Եթե փամփուշտակալը մեզ-

քիս ըլլար պիտի լցնելի, մե՛կ-երկո՛ւ— նայած թե քանի
բացվանի էր հրացանը: Եթե թշնամին առաջս ըլլար՝ պիտի
պարեհի, մե՛կ-երկո՛ւ... Եթե «հարձակում» պոռացվեր՝ սուրս
պիտի մերկացնէի ու խոթիի, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ,
մե՛կ-երկո՛ւ...

— Լավ, լավ, լավ, ախպար, հասկցանք, հիմա այդ
մատիար փորս պիտի խոթես:

Բարեկամս նոր հասկացավ, որ ձեռքիկը մատիտ էր:

Քայց շուտով երթալու ենք, պիտե՞ս: Մնաս բարով՝
եթե գաղիներ...

Հաջողութեան. երթաս բարով՝ եթե դաջիք,— ըսի,
սեղմեցի բարեկամիս ձեռքը ու բաժանվեցիներ:

1918

ԽՄԲԱԳԻՐ ԵՎ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կյանքիս մեջ բնավ խմբագիր եղած չեմ և սակայն
ատիկա չի կրնար արգելք մը ըլլալ յուրաքանչյուր խմբագրի
օգնութեան կարտտ փնձակն բմբունելու համար: Ծանոթանա-
լով հետզհետե հայ թերթերուն, զարմացմամբ կնկատեմ, որ
յուրաքանչյուր թերթն ունի մեկ սկզբունք միայն և խմբա-
գիրը իր առաջնորդողներով պիտի առաջնորդի ընթերցողը:
Սե՛ս դժգոհին կետ մը: Ուրեմն կնշանակե, որ խմբագիր մը
պարտավոր է միշտ հիշել իր երեկի սկզբունքը և ըստ այնմ
շուրժել գրիչը: Ի՞նչ զարհուրելի ծանրաբեռնութիւն մարդկա-
յին հիշողութեանը վրա... Ես եթե վարժապետ մը չըլլայի,
շիտակը, շպիտի կրնայի դիտնալ, թե ինչ եմ կերեր երեկ:
Եթե դժգոհ է հիշել երեկի կերածը, ապա որքան ավելի դժգոհ
է հիշել այն գաղափարները, որոնք արդեն մարսված են խրմ-
բագիրներու կողմէ տարիներ առաջ...

Ավելի ու ավելի ծանոթանալով, ևս դարձեալ զարմացմամբ
նկատեցի, որ հայ թերթերուն սկզբանց բաժանարար պատերը
այնքան ալ բարձր չեն և հաճախ խմբագիրները ոտին ծայ-
րերուն վրա կննելով կնային հարեանին պարտեղը: Այստեղ
ալ դժգոհութիւն մը.— հետզհետե ցածացող և շատ տեղեր

նույնիսկ անհայտացող բաժանարարները պատճառ կըլլան, որ խմբագիրները ծայրահեղ զգուշութեանց դիմեն գրիչը շարժած պահուն՝ սխալմամբ դրացի թերթին սկզբունքը շքարոզելու համար:

Դառնանք խմբագրական գրելու հարցին, որ ամենեին ցավալի և շարափոտ փերքն է խմբագիրնեյտուն համար:— «Ի՞նչ գրեմ այսօր»: Ահա հարց մը, որ յուրաքանչյուր առավոտ իրեն զարթնեցնող ծառայի հետևեն կցցվի խմբագրին առջևը: Այս դժվար լուծելի հարցը կառաջանա այն տակտիկական սխալն, որ խմբագիր մը յուրաքանչյուր համարին մեկ առաջնորդող կուտա: Ուրիշ բան էր հարկավ, որ 8—10 համարներ հավաքվելին ու մեկ առաջնորդողի հետևն ընկած՝ համախիչնային: Խմբագրին հանդատութունն առ կայահանջն: Օրենքըն ալ այդ է. վասնզի ո՞ր տեսնված է, որ մեկ ղինվորին մեկ սպա հատկացվի: Նամանավանդ առաջնորդողներու բաղմութեան պարագային, այս հասարակական փոփոխուտ շքրջանին, իրար կորսնցնելով, մեկը կձայնի հարավն, մեկը հյուսիսն ու շատ հաճախ իրար բնավ ալ չեն դտներ սամուրջալ առաջնորդողները:

Քանի որ խնդիրն առաջնորդող գրելու վրա է, կարևոր կսեպեմ մեջ բերել նամակ մը, որ պատկանած է նղեր խումբագրի մը, որը սակայն մեռած է այժմ: Նամակ մը, որ օգտակարութենէ զուրկ շպիտի սեպել ներկա խմբագիրներուն համար իսկ:

«Քսան և հինգ տարվա խմբագիր մըն ևմ,— կգրե հանդուցյալը,— և սակայն օր մըն իսկ շեմ թողուցած թերթառանց առաջնորդողի: Ասոր դադտնիքը հետևյալն է:— Երկար տարիներ ապրեցի վաճառականի մը հարեանութեամբ, որ ուներ շոաջ կին մը: Մեր սենյակները բաժնուված էին իրարմէ ընդմիշտ փակված դռնակով մը, որուն տախտակները սակայն թանձր ըլլալով, շէր հաջողվեր լսել ինձի այն սիրային խոսքերը, որ կըսվի մեղմածայն, սովորաբար: Կլսեի միայն վաճառականին այն խոսքերը, որ կուղղեր կնոջն իր բարկացած պահուն: Եվ որովհետև դրացի զույգը իր հարաբերութեաններեն միայն բարկութենեն էր, որ մաս կհաներ ինձի, այդ իսկ պատճառով երեակայութեանս մեջ կպատկե-

բանար երկու ամուսինները կատաղած, դադաղած, պատրաստ իրար վրա խոչանալու։ Ամեն առտու, երբ աչքս կբանայի, բարկացած դրացուս և իր կնոջ միջև փոխասացությունն ավարտելու վրա կըլլար սովորաբար։

Անանկ որ, հազիվ կհաջողեի քանի մը նախադասություններ ու շեշտեր որսալ տախտակե թանձր դոնակեն։

Երկուշաբթի օր մը արթնացա ճիշտ այն պահուն, երբ հարևանս ավարտելով իր բարկությունը, իբր վերջաբան կբսեր կնոջը. «Ալ շեմ քաշեր, հերի՛ք է վերջապես»։

Այդ օրվա իմ առաջնորդողի վերնագիրը եղավ «Հերիք է վերջապես», իսկ այդ վերնագրին աակը սկսեցի ձաղկել... ինչ-որ ազգային անտարրերություն... կարծեմ։

Երեքշաբթի աչքս բացի այն պահուն, երբ, հարևանիս կինը բան մըն էր գներ շուկային, բայց սխալ արժեք ցուցուցած էր ամուսնուն։ Այդ առթիվ ամուսինը կպոռար կնոջ վրա, «Անզգամ, քիչ առաջ 13 ոսկի քսիր, հիմա եղավ քսանչորս, շե՛ս ամչնար խոսքերդ կխեղաթյուրես»։

Երեքշաբթվան իմ առաջնորդողս լույս տեսավ սա վերնագրով. «Ամոթ է խեղաթյուրել» և ինչ-որ հայատյաց թերթի մը խմբապրին էր կարծեմ ուղղեցի խոսքերս։

Հարևանիս շորեքշաբթի օրվա բարկությունը խիստ բանաստեղծական էր ու բովանդակալից. անանկ որ ես շաբաթվա մը առաջնորդողներու նյութ քաղեցի ատկե։ Այսպես։ Ինչ-ինչ բաներ մըն էր պատահեր հարևաններուս մեջ— ցած խոսելուն համար չկրցի հասկնալ, միայն մարդը սապես ավարտեց. «Ամեն բան իր շափն ունի։ Զգո՛ւյշ դեպի ընտանեկան սրբությունները, սետք է խելքի գալ. լավ է ուշ, քան երբեք. մինչև ե՛րբ սպասել. գիտեմ գնահատել թե լավը, թե գեշը, կտեսնան իմ աչքերը այստեղ ալ, այնտեղ ալ»... Ինչպես կտեսնեք, բոլորն ալ հատընտիր առաջնորդողներ, միայն բարկության ետևը գրված...

Բնական էր, որ այս մթնոլորտին մեջ ապրելով, իմ բոլոր առաջնորդողներս ռադմաշունչ ըլլային և հաճախ նույնիսկ ձեռքս դեպի ահազանգին շվանը տանեի գայն հնչեցնելու համար։

Իբրև պակասություն մը պիտի խոստովանիմ, որ շնայած իմ բոլոր նյութերը կքաղեի դրացիիս, բայց և ոչ մեկ անգամ

առաջնորդողիս տակը դրի հարեանիս անունը, իբրև հեղինակ այդ հոգվածին և ոչ իսկ աշխատություններու սկզբին հիշած եմ այր ու կնոջը, այսինքն այն աղբյուրներուն, որոնցմն կքաղեի նյութերս: Բանագողություն էր քրածս, կխոսաւ վանիմ ու կզղջամ: Իսկ զղջացողի մը համար մեղք գոյություն չունի:

Ամառները սակայն իմ գրած առաջնորդողներս ինքնուրույն էին, եթէ շահավենք այն հատ ու կտոր օգնությունը, որ կհասցնէր ինձի ծերունի խոհարարս: Ամառվա երեք ամիսներուն բարկացկոտ հարեանս իր կնոջ հետ ամառանոց կերթար սենյակին դռները կողպելով: Եվ ես քանի՛-քանի՛ անգամներ հուսահատ ականջ եմ դրեր ամայի սենյակին դռանը, և միշտ ալ ձայն մը չլսելով, դարձած ու գրած իմ լրագրիս ճակատին. «Պատապարտելի լություն»:

Այդ էր, ահա, պատճառը, որ անաղնիվ հակառակորդներս մատի փաթթոց էին շիներ, որպէս թէ իմ ամառային առաջնորդողները ձանձրալի, երկար կրչան, ձմեռվանք կարճ և ազդու: Տղեանե՛ր, տղեանե՛ր... և դուք շփաւք, որ բաւոր մարմինները տարութենեն կընդարձակին ու ցրտութենեն կկծկին: Բացեք ձեզի հանդիպող առաջին ֆիզիկայի դասագիրքը և ան պիտի խոսի ձեր աչքերուն:

Իմ ամառնային աղբյուրը կկաղմեր ծերունի խոհարարս: Անգամ մըն ան ներս մտնելով հայտնեց. «Ճաշը պատրաստ է»: Ես ժամացույցին նայեցի և տեսա, որ դեռ կես ժամ կար ճաշի համար: Ու գրեցի. «Ժամանակեն առաջ»:

Մյուս օրը դարձյալ խոհարարս ներս մտավ, թէ «Թեյը խիստ զովաւոր է այսօր»: Ես գրեցի. «Պետք չէ զովաւորել»:

Երբ օր մը նկատեցի ծերունուն, թէ ամառները մտքուր չի լվանար, ան դատասխանեց. «Ի՛նչ քնեմ, պարո՛ն, աչքս չի օգնէր»: Ես ասոր վրա հորինեցի «Օգնության կարիքը» իմ ամենահայտնի առաջնորդողս, որն ահագին աղմուկ բարձրացուց:

Ես խմբագրութենեն հեռացա— կվերջացնի իր խոսքերը հանդուցյալ խմբագիրը,— ոչ անոր համար, որ նյութեր չունէի առաջնորդողներու համար: Ո՛չ: Եթէ նյութին առատության նայեի, դեռ 88 տարի ալ կրնայի խմբագրել թերթս:

խմբադրական կարասիներուն հետ մեկտեղ 344 լոկ խորագիր հունձնեցի ես իմ հաջորդին, թողնելու օրը»:

Վերջացնելով նամակին ընթերցումը, դարձացած կրպականշիմ. «Ի՞նչ առատության տարիներ են ասյրած մեր հին խմբագիրները, թերթի տերերը: Ի՞նչ շռայլություն խմբագրական նյութերու իրավունք շունի՞ն արդյոք ասրող խմբագիրներն իրենց իսպրը նախնիներուն ուղղելով ըսել. «Դուք գնացիք և բուրս նյութերը ձեզ հետ տարաք, մենք ավերակներու վրա՞ թողալորենք»:

1918

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ

Երբ Առաջին համաշխարհային պատերազմը վերջացավ ու հաղթեցին մեր դաշնակիցները, առտուն կանուխ «այգտիկ դաշնակից» Հայաստանն էլավ անկողնեն, հազվեցավ, կապեց դեմքերն ու կնկան և հարսին ձեռքը բռնած՝ ճամփա ընկավ:

Երբ Թիֆլիսին կմտենային, Հայաստանը դարձավ կնկան.
.. Կտե, կնիկ, հա՛րս, դուն ալ. եթե պատահի Թիֆլիսի մեջ հարցնեն, թե ո՞ւր կերթար, ըսեք կերթանք անկախության ուղելու, ըսեք կերթանք Փարիզ՝ գործ ունինք. կամ դուն,— դառնալով կնկան,— ըսե թե հարսս կտանեմ բժշկի: Քալի՛, կնիկ,— ըսավ Հայաստանն ու Թիֆլիս մտնելով, տաանց այս կամ այն կողմը նայելու՝ պատառ մը հաց առավ ու Պաթում հասավ:

Երբ նավը նստան՝ Հայաստանը դգակը ծոնց, ու սկսավ կրկել «Երբ ալեկոծ ծովին վրա» երգը, ապա վերջացնելով դարկավ կնկա ծունկերուն՝

- Գիտե՞ս, կնիկ, աս ծովն ալ մեզի կուտան:
- Փո՛ւ, սա կեղտոտ ծո՞վը... աղի անպիտան ջուրը... քա մա՛րդ, մի տաներ, ըսե տվեք ուրիշի, ես շնորհակալ եմ:
- Վա՛յ ավանակ, վա՛յ: Մո, տխմա՛ր, առանց ջուրի անկախություն կըլլա՞: Դե... դե երկար...
- Աղե՛կ, մարդ, իշտե բան մըն էր ըսի, ինչու կբարկա-նա՞ս: Ես շէի գիտեր առանց ջուրի անկախություն շէր ըլլար:

— Զըլլա՛ր, շըլլա՛ր, մեկ մըն ալ ատանկ խենթ-խենթ շխոսիս և բան է, եթե դաշնակիցներու կնխկներուն հետ խոսք ըլլա այդ մասին, շըլլա ըսեք շենք ուզեր:

Հայաստանը գդակը մյուս կողմին վրա ծոց ու այլ երգ մը սկսալ: Վերջացնելով երգը՝ զարկով կնկա ծունկերուն.

— Սո, կնի՛կ, ես սա կմտածեմ՝ թե Փարիզ հասնելուս ի՛նչ փառքով պիտի ընդունեն մեզի: Անշուշտ հիմի դաշնակիցները գործերնին թողած՝ ծովի ափը մեզի կսպասեն: Բնական է, ի՛նչ ըսել է, պզտիկ դաշնակիցը միշտ քաղցր կըլլա: Կհիշե՞ս, Հակոբն իր 12 սրդիներեն ամենեն շատ Հովսեփը կսիրեր, ետքը Բենյամինը, ինչու որ անոնք պզտիկ էին:

Հայաստանը պահ մը լռեց՝ ապա շարունակեց.

— Ա՛խ, աստված, ի՛նչ սրտազեղ տեսարան: Ան պիտի ըսե մեր տունը երթանք, ա՛ պիտի ըսե մերը երթանք. մյուսը պիտի վիրավորվի, Երսուղին մտտ իջնես՝ շորքորդը պիտի սրդորդի, անանկ սր շես գիտեր ինչ ընես: Բոլորն ալ հարազատ դաշնակիցներդ են, բուրն ալ հավասար շափով տառապեր են մեր ցավով, անթիվ անհամար դոհեր են տված մեզի համար: Մեկ՝ օրինակ, աս համաշխարհային պատերազմը. ինչո՞ւ զենք քաշեցին անոնք. պարզ է որ անոնք կըռվեցան, որպեսզի մեզի նման մանր դաշնակիցներ ոտքի ելլեն. ազատվեն... Ա՛տ՛խ, դաշնակիցներ, ես ձեր հոգուն մեռնիմ... Կնիկ, արդեն ծնածս օրին միշտ աչքս դարձուցի դեպի Անգլիա ու Ֆրանսիա ու հավատա՛, եթե Գերմանիա, Լուչնիսկ թագավորութուն տար ինձի, ես դարձյալ զայն չէի սիրեր: Գերմանիան շի սիրվիր, չէ՛, կնիկ, շի սիրվիր:

Երբ նավը Ֆրանսիո նավահանգիստն հասալ ու խարխսիս ձգեց, Հայաստանը դարձավ կնկան.

— Ինձի նայե, կնի՛կ, եթե, բուն է, վերագարձին տիկին դաշնակիցները ուզենան քեզի քանի մը ամսով հչուր պահել՝ շմնաս: Միասին եկեր ենք, միասին կերթանք: Հետո, քիչ մը ձեր շարժմանց մեջ ազատ եղեք. ամաչկոտութունը մեկզի թողեք. հացի սեղան պատրաստելուն պես նստեք վրան, հոս հրավիրելու սովորութուն չկա. հացեն վերջը բերաննիդ փեշով շորքեր... Փողոցին մեջ միշտ թևս մտած քալեք:

Այս պատվերները մարդն այնքան հապճեպ կուտար, որ կարծես հալածական մըն էր ու դիները բռնելու կուզային: Սա-

կայն, պատվերեն վերջ՝ սպասեց ժամ մը, երկու, նորեն կրկնեց ըսածները, ընդարձակեց իր մտքերը, քանի մը հավելումներ ըրավ՝ ոչ ոք երևաց ծովագերքը: Այդ գիշեր նա վուն մեջ քնեցին անոնք:

Հաջորդ առտու դարթնելով՝ ըսավ Հայաստան.

— Չեն գիտեր, չեն դիտեր գայս, կնի՛կ, եկեք հանկարծակի բերենք՝ գիրենք՝ թող ուրախանան,— ըսավ Հայաստանն ու Փարիզ մտավ: Հարցուց Վերսալին տեղը, ուր պիտի կայանար վեհաժողովը ու առաջ անցավ (հարկավ մեկու մը շտեյով, որ ինքը պզտիկ գաշնակիցն է):

Վերսալը հատնելով տեսավ դուան վյառ կեցած է հաղթանգամ բարապան մը՝ սուրը ձեռքին ու ոչ ոքի չի թողուր ներս մտնել: Պալատին շորս դին, պատերուն տակ ճանճերու պես լեցված կրզղային աշխարհիս շորս կողմեն եկած «մանր ազգեր»: Ասոնցմե զատ կային այնպիսի մանր ազգեր ալ, որոնց վարտիքին կոճակները հթե շարձակես՝ անկարելի է, որ արտաքնոց կարողանան երթալ: Այս մանր ազգերուն ի տես օտարական մը պիտի կարծեր, թե մանկապարտեզ մըն է այս շենքը, ուր պզտիկները եկել են դասամիջոց...

Բայց Հայաստանը տեսնելուն պես հասկացավ, որ ասոնք բոլորն ալ անկախություն ստանալու համար են ժողովեր. միայն քիչ մը դարմացավ այն պատճառով, որ փոխանակ իրար ետե հերթ պահելու, անկարգ խոնում մըն էին առաջացուցեր:

Հայաստանը շուղենալով խառնվել անոնց հետ (վասնզի ինքը մեծ զոհեր էր տվեր) և ուշադրություն անգամ շղարձելով անոնց, ինքզինքը շտկեց, տրեխին թելերը կապեց, (որը փրթեր էր) ու շեշտակի գեպի դուռը դիմեց ներս մտնելու համար:

— Ս-ս-ս, մուտքը կողմնակի մարդկանց արգելված է,— ըսավ բարապանը և սուրը վար բերավ:

— Ես կողմնակի մարդ չեմ, բարեկամ, դուն շես ճանշնար վիս, բայց ներսը կճանշնան:

Ապա ինքզինքը ուղղելով՝ վեհորեն ավելցուց խրոխտ.

— Իմաց տուր վերը, խնդրեմ, որ ձեր պզտիկ Դաշնակիցն է եկեր...

— Ատանկ հրաման մը չէ տրված ինձի:

— Ճանրմ, մեկ մը ըսե՛ դարձիր: Պզտիկ Դաշնակից ըսես, ալ կբազկ:

— Արտոնված չեմ:

— Ան ատեն Դաշնակիցներեն մեկը կանչե դուրսը խոսիմ:

— Չեմ կրնար:

— Կամ երկտող մը տամ՝ Անդլիային տուր: Վիլսոնը հո՞ւ է:

— Հոս է:

— Կանչե դուրս անգամ մը. ըսե Քուրքիո լծին տակ դարերով տառասյոզ Հայը քեզի կուզե դռան վրա, այն՝ որ ավելի իրավունք ունի իբրև ազգ տպրիլ, քան բարբարոս Քուրքիան:

— Ոչ մեկը կանչելու իրավունք չունիմ, կհասկենա՞ս:

— Տե՛ր աստված. հապա ինձի կլաչելի՞ն՝ այսպես դռան վրա կենալ:

— Ի՞նչ կա որ, դուն այս բոլոր ազգերեն ավելի՞ ես... Դուն ալ զնա անոնց հետ խաղա, մինչև որ կարդան, թե որուդ անկախություն կուտան, որուդ՝ ոչ:

— Ճանմ, ախր ես մենակ անկախության համար շեմ եկեր, մեզի հաց պետք է շուտափուշթ, սով է մեր երկիրը... Կամ վերջապես, ես անոնց ընկե՞րն եմ, ո՞րը անոնցմե ինձի շափ դո՞հ է տվեր... Չըլլա՞ թե անոնք ալ միտք ունին իմ օտներովս քալիլ: Գնա՛, զնա ըսե, որ պզտիկ Դաշնակիցն եկեր է, շատ մի խոսիր, չենե քեզ պատժել կուտամ:

Հայաստանը նաչեցավ հնկան, ամչցավ ու ըսավ.

— Գիտե՞ս, ասիկա ծառա է, բանեն խաբար չէ:

Այդ միջոցին Քլեմանսոն դուրս եկավ պալատեն՝ ջուր թափելու կերթար:

— Ներեցեք, պ. Քլեմանսո, սա ծառան չի թողուր որ ներս մտնեմ,— ըսավ ժպտերես Հայաստանը ետեկն հասնելով:

Քլեմանսո Հայաստանի երեսը նաչեցավ, ասլա իր մրտքերուն մեջ ընկղմած՝ յուրովի քան մը շշնջաց ու անցավ:

«Ծրեի շտապ կարիք ունի. կեցիր դա՛ նորեն ըսեմ», մտածեց Հայաստանն ու կեցավ ճամփուն մեջտեղը մինչև Քլեմանսոյին վերադարձը:

— Ներեցեք, պ. Քլեմանսո, երեկ շնանչցաք զիս. մեր Պողոս-Նուբար փաշան ձեզի շէ՞ խոսեր իմ մասին. ես Հայաստանն եմ, ձեր պղտիկ Գաշնակիցք,— ըսավ ան ինքնաբերաբար իր դատարկ փամփուշտակալը ցուցնելով (բոլոր փամփուշտները բարիկենդանին վառեր էր),— դուք մեզի հաց պիտի հասցնեիք, ս՛ւր մնաց: Ի՞նչ կա, ի՞նչ շկա այս տեղերը, ի՞նչպես եք: Ընտանիքս ալ հետս է. հիմա շեմ գիտեր... ձեր տիկինը տո՞ւնն է...

Այսպես խոսելով պալատի դռանն էին հասեր ու Հայաստանն ալ կուզեր ներս մտնել՝ բարապանը Քլեմանսոն թողուց՝ Հայաստանը պահեց.

— Պ. Քլեմանսո՛, ասիկա շի թողուր ներս մտնեմ...— պոռաց Հայաստանը:

— Ներս ի՞նչ կա: Գնա այն մյուս մանր ազգերու հետ խաղա բակը, մինչև ձեզ կհայտնենք:

Հայաստանին վրա պառ ջուր լեցվիցավ:

— Մա՛րդ, անոթի ենք,— ըսավ կինը:

— Անոթի ես ի՞նչ ընեմ. վա՛, դարմանալի կին ես,— պոռաց մարդը:— Քեզի ո՞վ ըսավ ելիր ետևս եկուր, ի՞նչ է, հարսանիքի՞ կուզայի, սա քաղաքական գործ է, ուրիշ բան չի նմանիր:

— Աղեկ, մեզի տար դաշնակցի մը կնկա հետ ծանոթացուր, դուն ինչ կընես՝ ըրե:

— Է՛հ, լռե, կնիկ, դուն ալ,— կտրեց անոր խոսքը մարդն ու կնայեր, թե ինչպես իր քովի Արաբիան պարկեն արմավ հանելով կուտեր:

Այդ միջոցին ձեռք մը պատուհանեն դավաթը ողողեց ու աղողուցքը թափեց ուղիղ Հայաստանի դիխուն:

— Վա՛յ խայտառակություն,— մրմնջաց Հայաստանն ու անդին փախավ:— Գերմանիան ալ ասանկ բան չէր ըներ:

— Ալե՛ք, կնիկ, հա՛րս, ելեք երթանք մեր Պողոս-Նուբարին տունը, նայինք ինչ պիտի ընենք: Տունն ալ հիմա անհամբեր լուրի կսպասեն, պետք է հեռագիր մը դարնել:

Ու Հայաստանը հեռագրատուն մտավ և ասանկ հեռագիր մը դարկավ.

«Ամսուս 18-ին հասանք Փարիզ, երկու անգամ տեսակցութիւն ունեցա Քլեմանսոյին հետ. Միացչալ և անկախ Հայաստանի հարցը վճռված է դրական իմաստով: Կերթամ մեր Պողոսին տունը...»:

1919

ՆՈՐ ՉԵՆՔ

Խաշիկ վարժապետը իր գործերն ավարտած՝ առանձնասենյակին դուրս ելլել կուզեր, երբ դռան վրա մարդ մը կեցուց զինքը:

— Վարժապետ, խնդրանքով մը քեզի կուգամ:

— Խնդրե՛մ, խնդրե՛մ, համեցեք, — ըսավ Խաշիկ վարժապետն ու սկսավ ստեն մինչև դուրս զննել օտարականը:

Անծանոթն այն սովորական մարդոցմէ էր, որոնք քանի շին սկսեք խոսիլ, շատ խելոք մարդ կկարծես և ուժերդ լարելով՝ կպատրաստվիս ընդունելու անոնց խորունկ մտքերը. բայց երբ կըսկսին խոսիլ, կհիասթափվիս ու ճիշտ այն խարկանքը կունենաս, ինչ որ կունենա մութի մեջ առուն թոնոդ մը, երբ երկու կանգուն լայնութիւնն ենթադրելով՝ ոտներն ամենայն ուժով կբանա ու ցատկելեն ևտք՝ կտեսնես, որ ընդամենը մեկ ոտք լայնութիւնն է ունեցեր առուն...:

— Վարժապետ, հանրապետական երկրի մը մեջ կապրինք, — տկտով այցելուեմ, — երբ պաշտպանութեան զինքերը միանգամայն փոխված են: Բռնակալութեան ատենները, ատրճանակ մը կկապէիր վրադ ու ալ սպահովված էիր հարձակումն: Բայց հիմա տարրեր է, վարժապետ, հիմա ճառով կհարձակին վրադ ու կխեղճացնեն քեզ՝ եթէ ճառին դիմաց ճառ չքաշես, բառին դիմաց՝ բառ չհանես...:

Խաշիկ վարժապետը տեսնելով, որ գործը երկարն պիտի վրային վերարկուն, իսկ հյուրին վրային իր հագցուցած լավ կարծիքը հանեց ու նստավ:

— Այո, կհասկնամ, ճառին դիմաց՝ ճառ, բառին դիմաց՝ բառ չեստ՞:

— Գիտե՞ք, պարոն, ես դաշնակցական եմ...:

— Գիտեմ:

— Շնորհակալ եմ: Այո, դաշնակցական եմ և այդ իսկ պատճառով կրկնակի կարիք ունիմ ճառի: Ինչպես գիտեք, մեր կուսակցութիւնը սովորութիւն ունի հերթով իր բոլոր անդամները պատգամավորի պաշտօնով խորհրդարանը դրուելի, որն՝ ամսով, որը՝ շաբաթով և որը՝ նույնիսկ մեկ նիստով, որպեսզի տեղ պահեն՝ մինչև արժանավորը հասնի: Այսօր հերթը ինձի է հասեր ու խիստ կամտահոգովիմ, թե երթալուս ի՞նչ խոսիմ: Մեկ նիստի համար ըլլար՝ հոգ չէր, կըրնայի շխոսիլ, բայց ութը, տասը նիստ իրար վրա նստել ու լռել՝ ըլլար, մանավանդ, որ պաշտօնական լող մը ունինք արդեն, ես ալ անդիին ելլեմ հանկարծ լռեմ, կհարմարի՞...

— Զի հարմարեր...

— Այդ իսկ պատճառով քեզի եմ հկեր, որ ինձի համար ճառ մը շինես:

Այս խոսքին վրա զարմացած՝ ժակետն ալ պիտի հաներ վարժապետը՝ եթե շապիկ ըլլար վրան:

— Ուրեմն կուզես, որ քեզի ճա՞ռ մը շինեմ...

— Այո, այո, կիսնդրեմ հատուկեն:

— Բարի... Իսկ ի՞նչ գիտես:

— Ազվոր ձի նստել գիտեմ:

— Զի նստելը շի բավեր. բառ, բառամթերք, հաշող ձայն, ձևքի շարժում...

— Զևոքի շարժում... Օրինակ, մարդ ծեծել գիտեմ, գալով ձայնին՝ ծեծելուս կրնամ ազվոր ալ պոռալ վրան:

— Այդ չէ ուզածս: Դատողութիւն, տրամաբանութիւն, բեմասացութիւն...

— Ոչ, ատանկ բաներ շունիմ:

— Իսկ ի՞նչ կրթութիւն ունիս, կկարդա՞ս, կգրե՞ս:

— Կգրեմ, բայց չեմ կարդար:

— Կնշանակե ոչ մեկ ատաղձ ունիս ճառի համար ու կպահանջես ճառ շինեմ քեզի. ի՞նչով շինեմ:

— Շինե՛, շինե՛, բանով մը շինե, կաղաչիմ...

— Ճտող՝ բառով կշինվի, դատողութիւնամբ, կապակցութիւնամբ և ուրիշ խել մը անանկ բաներով, որմե դուն տեղեկութիւն շունիս:

— Է... շի՞ կարելի արդյոք ատ ըսածդ բաներ պատգամավորներե փոխ բերել:

— Անհնար է, ո՞վ իր կարծիքն կամ դատողութիւնը փոխ կուտայ:

— Ի՞նչ կըլլա սիւ, ախարար: Որո՞ւ խնդրեմ, թե՛ կարծիքդ տուր մեկ բոսկով տանիմ կարծեմ բերեմ՝ շի տար: Գիշեր մը պառկելուն կուզեմ:

— Գիշեր՝ ի՞նչ կըսես, կկարծես գիշերը երազին մեջ սփռելիցիօն պատգամավոր մը կարծիքի պետք չո՞ւնենար: Կամ եթե զառանցե քունին մեջ՝ բառ պե՞տք է, թե ոչ:

— Ես կբերեմ, դուն մի խառնվիր:

— Բերիր նե՛ ես ալ կշինեմ:

— Հոս, ի՞նչ պետք է քեզի:

— Օրինավոր, մարդավարի ճառ մը շինելու համար ինձի հարկավոր են հետեւյալ բաներ. —

Հառաջաբան ու վերջաբան մը: Նայե, որ երկար հառաջաբաններն բերես:

Կբերես ինչքան կրնաս՝ շատ բառ, միայն նայես, որ միտք չըլլա մեջերնին մտոցված, մաքուր, պտված բառեր:

Եվ որովհետեւ դժվար է իրարու կտեհ անդադար խոսելը, և պետք է պահ մը լռել, շունչ տունելու համար, ահա այդ խոսքին մեջերը դնելու համար քիչ մը լռութիւն բեր. ըսե խնդրեմ երկու բոսկով խոսեք՝ ձեր լռութիւնը տանիմբերեմ:

Երկու հատ առակ բիր միայն, շատ կուտա՛ շերեւ:

Կբերես քիչ մը կարկատան, որ բան է, եթե խոսելուդ հանկարծ ճառդ պատռվի կամ կապը կորսնցնես, իսկույն ձգես վրան կարկտես: Նայե, որ կարկատանները ծակ չըլլան:

— Այսքա՞ն:

— Կբավե:

— Իսկ շինելիքդ ճառը երկա՞ր պիտի ըլլա, քանի՞ գավաթ ջուրով կխոսվի:

— Բավականին երկար կըլլա:

— Հոգ չէ, բեմը ելնելու՞ դուչ մը ջուր կառնիմ հետս: —

Գուն ինձի առ ըսե, այդ ճառը կուռ, տրամաբանական բան մը պիտի ըլլա՞, թե ամեն վեր կեցողը ջրե պիտի:

— Շատ կուռ:

— Այո, այո, կուռ շինե խնդրեմ, շատ կուռ, այնքան, որ պատգամավոր Զուբյանն ալ չկրնա ջրել:

— Օ, ի՞նչ կըսես, ատիկա անկարելի է, Զուբյանը չըրե նե՛ ուրիշը պիտի չրե: Գիտությունը ցայսօր չէ արտադրած ճառ մը, որ զուգը պատգամավորները շխարողանային հերքել:

— Ըսե՛լ է շեռ կրնար:

— Զե՛մ կրնար:

— Մեր ֆրակցիայի նախագահն ալ չի կրնար:

— Ոչ:

— Թորոսյա՞նը:

— Անկարելի է:

— Աղբալլա՞նը:

— Հնար չէ:

— Բայց հոգ չէ... մնաս բարով:

— Երթաս բարով, բայց շե՛մ հուսար, որ տան:

— Կուտան, ճանքմ, կուտան,— ըսավ պարոն ապսպրողն ու գնաց:

Գնաց ու երկու օր բնավ չերեաց: Երրորդ օրը հաշիկ վարժապետին գալով՝ պատմեց, թե ոչ մեկը ուզեցեր է բան տալ: Հառաջաբանին ու վերջաբանին տերը չէր տված՝ առաջարկելով հառաջաբանին հետ քիչ մըն ալ բուն նյութեն վերցնել: Պատգամավոր մը ըսած է, թե՛ իմ ըսելիքները խորհրդարանին մեջ չեն վերջանար, կեսն ալ կտանիմ տունըս՝ քունիս մեջ խոսելու:

Պատգամավոր մըն ալ իրեն ըրած խոսելու առաջարկը լսելով, կարծած է, որ սատանան ինքզինքը փորձելու է եկեր, «Այ տղա, ետիս գնա» ըսեր է: Զի համաձայնած նույնիսկ հազալ, փոնքտալ:

Պատգամավորներին մեկն ալ իր տոակները քանակով է ուզեցեր տալ:

Վերջապես, ինչ երկարեմ, ոչ ոք զիջած է օգնելու խեղճ մարդուն. նույնիսկ իր ֆրակցիայի մարդիկ մերժած են որևէ փոխատվություն, առարկելով, թե սա ամիս մըն է, որ նոր կարծիք մը կփնտրենք հայտնելու, բայց շինք գտնելու:

Միայն պատգամավոր Զաքարյանն է եղեր բոլորի մեջ առատաձեռն, անիկա տվեր է անոր ձեռքն իր «ա՛ա՛ա՛ա՛ա՛»-ին պոչը և ըսեր է. քաշն՛, ինչքան երթաս՝ ետեեդ կուգա...

Մեր կառավարութիւնը այս օրերս պատվիրակութիւն մը դրկեց Եվրոպա՝ հայկական վեց վիլայեթները խնդրելու համար Գնացողները բուրն ալ ռուսահայեր են և պիտի թուրքահայերու համար կրկիր խնդրեն:

Սրեկ կնիկս դրկեցի «կնիժկան» փոխելու, շէին տալեր, ըսել էին «գնա՛, թող մարդդ դա, «կնիժկան» մարդուտ անունովն է»: Ու այսօր շորս ու կես ժամ հերթ եմ պահեր գրասենյակին դռներ, ևտես ունենալով կամարչիցի այլի մը ու առջիս տասներկու տարեկան մանչ մը:

Արդ, այն կառավարութիւնը, որուն պաշտօնյաները մեկ ֆնտանոց հացի շեկ անդամ շեն վստահեր մեկի մը, որ «կնիժկային» տիրոջ կնիկն է, որ ըստ եկեղեցու «երկոքցան մարմին մի» են, — կըսեմ — այդ կառավարութիւնը ինդո՞ր թույլ կուտա իրեն երթալ Եվրոպա և ուրիշի անունով վեց վիլայեթ խնդրել: Պիտի ըսե՛ն. — «Թուրքահայերը եղբայրներ են», — ճշմարիտ է, այո՛, սակայն ինչքան ալ եղբայր ըլլան, ամուսիններու պէս կապված շեն իրար: Եղբայրները մեծանալիս կկռվեն իրար հետ, կծեծեն զիրար: Կամ թե, եթե իրոք եղբայր են, ի՞նչ արգելք կա, որ երկու եղբայրներ իրարու ձեռք բռնած Եվրոպա երթան: Եթե ռուսահայերը կառարկեն, թե տաճկահայ եղբայրները ներկայանալի արտաքին մը շունին, կամ լեզու շեն գիտեր, ավելի աղեկ, թող եվրոպացիք անոնց խեղճ վիճակը տեսնեն ու շատ կարելի է, վեց վիլայեթի տեղը յոթը կուտան:

Չէ, խնդիրը սկսբունքն է:

Կամ պետք է ով որ «կնիժկա» տանի՛ փոխեն, կամ եթե շեն փոխեր, պետք չէ ուրիշի անունով Եվրոպա երթան ու վեց վիլայեթ խնդրեն:

Ես այսպէս գիտեմ:

(Ոչ Վիերստե Հյուզայի)

Պուտ մը կա՞թ...

Այն առավոտ Թավրիդն իր աչքը բացավ՝ ու շտեպածը տեսավ. — փողոցները լեցուն, ալ գիտնական կուղես, ալ փիլիսոփա, քննադատ, բանաստեղծ, բժիշկ, քահանա, վիպասան, դերասան, ճարտասան, ծո ստան, ասան, ասան... իրավարան, փաստաբուն, պատմաբան, լեզվաբան, երգիծաբան՝ արան, արան, արան... ծո նախարար, խոհարար, ըվացարար, արար, արար, արար... նախարարապետ, վարդապետ, վարժապետ, կարապետ, ապետ, ապետ, ապետ, վերջապետ ապետ...

Այդ մենք էինք: Երևանեն հաղթական փախած՝ հոն կժամանեինք... մուրալու: Պարսկաստանին մեջ սակաջն, սովորութուն կա, որ մուրացկանները շեն մտնելու տուն մը ու պարզիպարզո ձեռք մեկներ, թե մեզի հաց տվեք, այլ կամացուկ մը կիսաբաց դռնեն ներս կմտնեն, առանց աչ կամ ձախ նայելու կկրկրդեն բակին մեջտեղը ու եթե մուրացկանը դերվիշ է՝ կազոթե, եթե աշուղ՝ կերգե, վերջապես յուրաքանչյուրը ըստ իր արհեստին բան մը կըսեն և ի վարձատրութուն այդ բանի՝ կտոր մը հաց կստանան: Ամեն բան փոխարինությամբ է հոն, ծիտերն անգամ առանց ծլվրլալու իրավունք չունեն կեռաս ուտելու:

Մենք երեք քնկերով հարուստ բակ մը մտանք ու կարգացինք կատակ մը: Հավնեցան, ըսին խաղցեք կատակը, խաղցինք. ու վերջեն թեև հաց չտվին, բայց նույն օր իրենց սոմառանոց երթալու պատճառով ողջ տունը մեզի թողին ի վայելումն: Ելանք երեք տրեխավորներս ու անշապիկներս բաղմեցինք անանկ օթոցներու վրա, որոնց վրա բազմողը պիտի ունենար — շատ շեմ ըսեր — 12 զույգ սպիտակեղեն և կրկու զույգ փոկավոր կոշիկ՝ մեկը սև, մեկը գեղին:

Տան մեջ միևսկ մնալով, բացինք բակը նայող լուսամուտը ու դեմը կայնեցանք: Ու մենք այդ լուսամուտին դեմ կայնած բոլորովին նման էինք ածխանկար սիլվետներու՝ սակեղեն շրջանակներու մեջ կախված...

Կես ժամ հազիվ էր անցեր, երբ կամաց մը բակին դուռը
ճեղքվեցավ. ճեղքը մեծացավ, ու փիլիսոփայությունը գըն-
դընալով ներս մտավ... Երվանդ Ֆրանգյանը:

Փանթոլոնին աչ աղբրեն թիզ մը սրակաս, ձախը՝ թիզ
մը կախված, արևիսները շորցած-կոշկոճած, քայլելու ատեն
կոշիկի նման թաք-թաք-թաք կըլլար:

Այցելուն հազաց, կարծելով՝ տունը մարդ կա, ձեռքը
գրպանը տարավ (եթե գրպանին մեջ թաշկինակ ըլլար, քիթը
սրիտի սրբեր) ու սկսեց.

— Ի՞նչ է փիլիսոփայությունը: Հարց մը, որուն անկա-
րելի է պատասխանել առանց ակնարկ մը նետելու 19-րդ
դարուն Գերմանիո մեջ տիրող փիլիսոփայական շեղաներուն
վրա — գեթ նշանալորներուն վրա: 19-րդ դարին քանի մը
օր էր անցել, որ Հեղելը երևան եկավ ու իր փիլիսոփայական
ժանրոցը դրավ զիտական հրատարակին վրա: Շատ տեղին
է հոս հիշել պետիմիլյմի նշանավոր ներկայացուցիչ Շոպեն-
հաուերի սա խոսքերը, թե...

— Պուա մը կա՞թ..., — պոռաց անհամբեր ընկերս պա-
տուհանեն ու բուրբս խնդացինք:

— Վա, դո՞ւք այստեղ, Ասոն, — վեր թռավ Երվանդը մեզ
տեսնելով, ու ամշնար պիտի՝ եթե գաղթական ըլլար:

— Այո, մեկ ժամով թագավոր ենք հոս... սոված:

Անիկա հարց չէր տվեր պատասխան անելու համար,
այդ պատճառով ձգված ու բաց թողնված ռետինե պարանի
նման ետ փախավ ու անմիջապես իր ձայնը լսելի ըրավ հա-
րևան բակին:

— Ի՞նչ է փիլիսոփայությունը: Այս հարցին անկարելի է
պատասխանել առանց ակնարկ մը նետելու... լավեց շուներու
հաշոց, ապա քարի մը ձայն: Հավանաբար դատաստար «ակ-
նարկ մը» նետելեն ետք՝ քար մըն ալ իր վրա հարձակվող-
ներուն վրա էր նետեր...

Մեր բակը մտավ Սահակյանը, մաղերը ավելի ճերմակ,
երեսը առավել սևացած ու առանց դուռը դոցելու, ըսավ.

— Նիստը համարում եմ բացված, ձայնը պատկանում
է պարլամենտի անդամ...

— Խնդրեմ, դուռը ծածկե, նոր նիստը բաց, — պոռացին
վերեն:

— Ասա՛... — ըսելն ու բակին ելլելը մեկ ըրավ:

Հաջորդ բակին մեջ անհամաձայնությունը դադրեի էր ու Ֆրանգյանը կշարունակեի խոսել:

— Ես ձեզ զրկում եմ ձայնի իրավունքից, — լսվեց Սահակյանին բամբ ձայնը:

— Ես սբարլամենտի անդամ չեմ:

— Հա, ներեցեք: Բայց թեկնածու էիք կարծեմ: Լավ: Գնաց:

Գլուխնիս ծուցիներ տեսնելու համար, թե ինչ կդառնար մեր դրացիին բակը: Երվանդը կխոսեի պատուհանին տակ. պատուհանին մեջ սաները վար կախած նստեի էր պզտիկ տղա մը ու խոշոր բրդուճ մը կկրծեր: Մանչը բավական լսելով դասախոսին, ծղրտաց վերջապես. — «Հորեղբայր, ատ ի՞նչ երգ է, բան չեմ հասկնար»:

Հացի այն սբատառը, որի վրա սեեռել էր իր ուշքը այցելուն՝ վերջապես վրա էր: Ֆրանգյանը աջ նայեցով, ձախ նայեցավ ու հանկարծ.

— Արշի՛ն մա՛լ-ալա՛ն...

Տղան խնդաց:

— Մալալա՛ն, մալալա՛ն, — ոգևորվեց հյուրը:

— Աս քեզի հաց:

— Մ-ա-ա-ա-լ ալան...

Մեր բակը մարդ էր մտեր, երիտասարդ մը, որուն շճան-լըցանք. ոչ մեկ նշան չունեի վրա: Եթե սբարլամենտական ըլլար՝ խելքը կարճ կըլլար, եթե փաշա ըլլար՝ աշքերը խոժոռ, քիթը երկու կանգուն կախ կըլլար, եթե վրացյանն ըլլար՝ կինը հետ կըլլար...

Բանաստեղծ էր: Ծտքեն իմացանք՝ երբ հնչեց «քնար»-ը:

1921

ՍԿԻՉԲՆ Է ՆՐԿԱՆՑ

Այն առտուն, երբ Ֆրանսա Ջենովա կերթար, սպասուհին ալ նկատեց, որ սրտովը շէր: Թեչի գավաթը ձեռքին, մտադրադ հայացքը ուր որ սեեռեր, կնս ժամ կտեներ մինչև թար-

Թելը: Խեղճ սպասուհին մաղ մնաց, խոստովաներ իր հան-
ցանքը ու տիրոջ ոտներն իջնար, վասնզի շաքար կոտրելուն
քանի մը կտոր գրպանն էր դրեր ու հակառակի պես ալ քա-
ռորդն մը ավելի նաչվածքն այդ գրպանին էր ուղղեր... Կու-
տիր առանց սուղեր նաչելու. երկու անգամ թեյի դավաթին
փոխարին աղամանը դրավ բերնին ու մորուքը սրբելու հա-
մար վերցուց փոքր աղտության մը վերաբերող փաստաթուղթ,
որ դուրսեն ուղարկված էր իրեն ստորագրելու:

— Չի ուզեր, թող շերթա, խոմ մեղ նման ծառա չէ՞, որ
իր շուգածն ընե,— կամ մտար սպասուհին ինքնիրեն, որը
չգիտեր, թե ո՞ւր կերթա աղան, և այն կտրծիքն ուներ, որ
աղաները առհասարակ արտոնված են շուգածնին շրնելու:

Սեղանին կենալով, ճամպրուկը վերցուց, պահարանին
մոտեցավ դարձյալ նույն անուշադրությամբ, ինչ ձեռքն ին-
կավ՝ մեջը խոթեց.— խաղաթուղթ, թաշկինակներ և զույգ մը
ապարանջան, որ երեկ պիտի գրկեր սիրուհուն ու մոռցեր էր:

— Իցիվ թե ալ չվերադառնա,— ակամա մտածեց սպա-
սուհին, երբ ճամփու դնելն վերջ տիրոջ սենյակը կգանար:
Կյանքին մեջ առաջին անգամն ըլլալով, ազատութեան մեջ՝
բարձր հազաց: Ու շատ քաղցր թփեցավ այդ հազն իր ականջ-
ներուն: (Ես կուղեմ ազատութեան մեջ թոքախտ ըլլամ):

Հազին վրա խոհարարը, որ հասկցավ, թե աղան տունը
չէ, սենյակը վազեց իր կեղտոտ վերաբերուով փարվեցավ
սպասուհուն ու սկսեց համբուրել: Ուրիշ անգամ ալ համբու-
րեր էր, բայց համբույրը ազատութեան մեջ ուրիշ բան ըսել
էր: Սիրո անհուն թափը մեղմելին զկնի, խոհարարը սկսեց
սենյակին ծակ ու ծուկը խտոնել, իսկ սպասուհին սեղանը
կպեղեր:

— Ի՞նչ եղավ թուղթս,— հարցուց պզտիկ ազդ մը գլուխը
ներս խոթելով,— ստորագրե՞ց:

— Ո՛չ, եղբայրս, մորուքը սրբեց գրավ վար:

— Մո՞րուքը ըսիր... իսկ ազդիս գոյութեանը ստ թուղ-
թն էր կախված,— ըսավ, մոլտաց. հիմն մեծ ազդ ըլլար՝
պիտի բարկանար, բայց որովհետև պզտիկ էր՝ լացավ,—
տուր Անգլիային տանեմ, ըսավ:

Յրանսիո սպասուհին ծանոթ չէր, եթե ոչ պիտի դպուշացնէր Անդլիո սեղանին շղնելը, ինչու որ շաբթի մը ի վեր հարբուխ էր ու առվակի պես կվաղեր քթին:

— Ի՞նչ ընենք,— հարցուց սպասուհին խոհարարին, որոնն անունը չեմ դիտեր, բայց ըստ երևույթին ժակ պիտի ըլլար:

— Գնա կանչի հոս Եվրոպիո բուրք սպասավորներն ու սպասուհիք, երեկվրնե քիչ մը փիլաֆ է ավելցեր, կուտենք կուրախանանք: Տերերին ոչ մէկը սունը չէ: Զինովա են գուցեր:

Գնաց: Սաբեթը, Անդլիո աղախինը, ամանները բերեր էր Լա-Մանը լվանալու: Եկավ, բայց աչքը մնաց տան կողմ, կվախնար Իսլանդան պասուհանն մտներ աղատություն գողնալու: Հոլանդացի սպասուհին գալով, մառանի դռան վրա կողպեր դրավ: Վիլհելմ կայսրը, Գերմանիայի այդ անկոչ հյուրը, կըսէ, կմտնէ ծախու պանիրը կուտէ:

Գերմանիո աղախինը նստեր էր հիվանդ երկխաչին օրորանին առնթեր կուլար ու իր շապիկը կկարկատեր: Ժակը այս վիճակով ավելորդ համարեց կանչել, կարոտով անոր պարանոցին փաթըթվեցավ ու միասին լացին:

— Եղբայրդ սպանեց ասոր հորը,— հազիվ կրցավ ըսել դերմանուհին արտասվաց ընդմեջէն, կշտամբել ուղելով:

— Այո, բայց անիկա ալ ողջ չէ հիմա,— ըսավ ժակը ու արցունքի մնացած կաթիլներն ալ սեփական կորուստին վրա հոսեցուց:

Այնուհետե բաժանվելուն՝ բան մը Գերմանիո աղախինը քրթմնջաց իր տիրոջ հասցիին, բան մըն ալ ժակը իր տիրոջ: Ժակ Ավստրիո այգիով անցավ Իսպանիա, որուն աղախինը ներսին դուռը կողպեր էր՝ կխումփար: Փորթուկալիո մանկամարդ աղախինը (քիչ մը թեթե) քրքջաց ու վաղեց:

Երբ ժակ տուն դարձավ, Յրանսիո աղախինը փառավոր սեղան էր բացեր. փիլաֆին վրա կար նաև խորոված միս, որը թերեփ ըլլալով, Յրանսա չէր կրցեր ուտել: (Ատամներու առաջին շարքը շինովի էր):

Ճաշէն վերջ, իբրև ժամանց, խառնեցին Յրանսիո արխիվը: Ինչև՛ր շկային հոն կուտակված, իր հիշատակարանը, Պիամարկին նամակները, Գերմանիո վերջին պարտամուրհա-

կը, սիրաչին ոտանավոր մը Ռուսմանիո թագուհուն նվիրված, որուն կսիրեր ատեն մը: Անգլիո գրած իր մեկ նամակին մեջ Ֆրանսիա կսեր.— «Գերմանիո հաղթեցի, այո՛, բայց սա ի՞նչ վախ է մտեր մեջս. գիշերները երազիս կուգա որպէս թե շեմ հաղթած տակաւին, ու մինչև շեմ դարթներ, իր աված պարտամուրհակը շեմ կարդար՝ սիրտս շի հանդատանար: Ամերիկա օրական շորս անդամ ծառան կղբկե՛ թե աղաս կըսե պարտքդ տուր, կարծես փախանք: Ես ալ դանապանիս սրասվիրել եմ ըսել, (ի՛նձ համար) տունը չէ: Անգլիա՛, աշխարհը ինձի-քեզի մնաց. պարզե օտներդ ուր որ կուզես: Ան չէ, գլխո՞ւ ես ինտոր Ճափոնը Սիբերիան, պատառ-պատառ կու կուտա: Դեսպանը ինձի հայտնեց՝ ըսի վնաս չկա: Դուն ալ ձայն մի հաներ»:

Ապրիլ 11 թվակիր նամակին մեջ, Անգլիա ի միջի այլոց կըսե.— «Փոքր ազգերը շատ կարևոր գործոն են: Անոնք կոչուրացնեն մեծ ազգերու գործը: Պատկերավոր խոսելով, անոնք կլավիշներն են դաշնամուրին, սրբ ինչքան շատ ըլլան, այնքան կիրոպական կոնցերտը ներդաշնակ դուրս կուգա: Փոքր ազգ կա, որ երկու հատվածե կրաղկանա, օրինակ Հայաստանը: Ատիկա ես առաջիկ լավ. կիսվար ու կիսվիրը կկազմեն երաժշտութեան մեջ: Ի՞նչ երկարեմ, սիրելի Ֆրանսա, մանր ազգ՝ մանր ստակ ըսել է մեծ պետութեանց ձևքին: Բարեկիր տիկնոջդ, մեր կացինը ձեր տա՛նն է...»

Երկրորդ նամակի մը մեջ Անգլիան կըսե. «Ֆրանսա, ծառաներու մեջ ինչ-որ փսփսուկ կա, գիշերը ծառաներես մեկը քնո մեջ տվալ Սովետական Ռուսիո անունը: Ի սեր աստուածս, հսկե ծառաներուդ»:

Ֆրանսա ասոր պատասխաներ էր.

«Ի՞նչ ընեմ... ես որ քեզի կըսեմ եկուր սա Ռուսաստանին հետ խիստ վարվենք՝ շես լսեր: Այո, ես ալ իմոնց մեջ եմ նկատեր. ավելի խիստ. խոհարարը կերակուրը հում կղնե առաջիս, սպասուհիս բութ դանակ կառաջարկե, որը ինչպես գիտես զինաթափութուն ըսել է. պատրաստվող հեղափոխութեան փաստեր շատ ունիմ. օր մը անցիր մեզ մոտ կխոսենք: Բարեներս տիկնոջդ: Ձեր կացինը մեր տունը չէ»:

Կարգալով սա նամակները, Եվրոպիո սպասավորները առաջին անգամ իմացան, որ տիրերն ալ իրենցմե կվախ-

նան եղեր: Տրանսիո խոհարարը որոշեց պղպեղին քանակը օրօրին շատցնել կերակուրին մեջ: Փորթուկալիո սպասուհին վճռեց ալ համբույր շտալ իր տիրոջ: Վերջին պատուհաններուն վարագույրը թողին ու ժողովի նստան, ալիւլի կարեոք որոշումներ տալու:

Երբ Փարիզի փողոցներուն մեջ լսվեց Տրանսիո խոպոտ հաղը, ժողովականները լամպը մարեցին ու իրենց տները քաշվեցան: Անգլիան ժամե մը ալիւլի իր զոց դռան վրա նըստած Սարեթին կապասիր: Սարեթին քսավ, որ դացեր էր Տրանսա ժաննային մաղերը հարգարելու: Անգլիան շխտեց, բայց գիտիր, որ ժաննան մաղերը խուլած կախտաի ու հարգարելիք մաղ շունի...

1922

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՆ, ԹԵ ՆԱՎԹԻ ՍԿՂԱԴ

Այս հարցը բնականորեն կծագե ամեն հայուն մեջ՝ կարգալով Երեկի հեռագիրը, թե՛ «Անգլիան կուզե հայկական տուն մը կովկասյան նավթերուն մտտիկ»:

Երեսուն տարիների ի վեր կոշտացած հայկական հարցը նավթով կլուծվի եղեր... Մինչդեռ մեր աղգասերները միամըտորեն կարծեր են, թե արշունով պիտի լուծվի:

Թշուրիմացություն մը, որուն զոհ գնաց մեկ միլիոն հայություն:

Գուցե մեր աղգասերները տառիկեն, թե ասկե երեսուն տարի առաջ նավթն այնքան արժեք չուներ:— Շիտակ է, չուներ, բայց արշունը բնավ արժեք չի ունեցեր և չունի ալ հիմա: Արշունով չէ, որ պիտի դարմացնենք Անգլիո: Անգլիա սա համաշխարհային պատերազմին Երկու միլիոն անգլիացի կոտորել տվավ, ու այսօր ալ Գերմանիայեն իր զոհերու հսգիները չէ, որ կպահանջե, այլ... ոսկի:

Եթե նավթը անժանսթ էր երեսուն տարի առաջ, իմ կարծիքով հայկական հարցը ձեթով պիտի լուծվեր, իսկ Հայաստանը, փառք աստուծ, ձիթահաններով աղքատ չէր: Հա-

չաստանը կրնար Անգլիո փիլաֆին վրա քաղցր ձեթ լեցնել, հրագին դառն ձեթ ու քուպն ալ անոր ձիուն կերցնել:

Հավաստի եմ, որ ան ատեն Անգլիա պիտի հայտարարեր այս օրվա թոնով թե՛ «Հայկական տուն մը կուզեմ Կովկասյան ձիթահաններուն մոտիկ»:

Եթե վաղը նավթն ալ ձեթի օրին իշնա և անոր տեղ համաշխարհային դործածությունն դանկ ենթադրենք՝ կուպրը, ի՞նչ կկարծեք, ան ատեն Հայկական հարցը կուպրով շարժի լուծվի. — կերզնամ, որ այո: — Չորս տարի առաջ, երբ Հարգորդը ուսումնասիրության նպատակով Հայաստան եկավ, մաղ մնաց, որ մեր հարցը սպիրտով լուծվի (Երևանի պահեստին մեջ 140 վեդրո սպիրտ էր դառը):

Ինձի որ մնար, Ամերիկային կ'լսեինք ու հայկական հարցը ջուրով կ'լուծեինք:

«Մովե ծով» լսողուզը, որ Ամերիկան դրավ մեր բերնին՝ ջուրով լուծել ըսել էր, որ մենք շհասկցանք ժամանակին ու թող տվինք, որ այսօր Անգլիան մեր անարատ հարցին մեջ նավթ խառնե:

Հայկական Տուն...

Պարզ է, հիմա կ'լնե, որ այդ սուներ քանի սենյակե ալ բաղկացած ըլլա՛ վարի հարկը Անգլիո պատկանի պիտի, որ «մոտիկ» նավթը հոն ամբարի մինչև տանելը: Կկարծե՞ք, թե Տանկաստանին հայկական տունն զատ նավթի տակառներ ալ չ'պահանջե լողանի Կոնֆերանսին մեջ: — Կամ, մի՞ դուցե այդ Տունը տակառի ձևով շինել տա, որ ուղած ատեն հայությանը դատարկն՝ նավթ լեցնելու համար:

Հայաստան դատարկելը նոր թերմին մը չէ:

Յարին ատեն ուստկան մինիստր Լոբանովն ալ ուզեր է Հայաստանը առանց հայերու, միայն չէ պարզված ցայսօր, թե երջանկահիշատակ մինիստրը Հայաստանը դատարկելով՝ ի՞նչ է կամեցեր լեցնել մեջը...

Բայց այսօր Անգլիա պարզ կ'ըսե թուրքի:

— Հայաստան տուր նավթ լեցնեմ մեջը:

Տեսիլք. — Հայկական հարցը լուծված: «Նավթի մոտիկ» կանգնած է հոյակապ Տուն մը՝ անգլիական պատվալով: Արտասահմանին մեջ աշխատող ազգային գործիչները կովի բուր տեսակի զենքերը վար դրած, իրենց կանանց-Լրեխա-

ներու ձեռքին բռնած խոնավեր են Տան դռան վրա, աշխատելով ամենեն առաջը մտնել, լավ տեղերը գրավելու համար։ Տան բանալին Անգլիոն ձեռին է, որը շեմ գիտեր ինչո՞ւ կուշանա դալ բանալի Տան վերի հարկի պատուհաններին մեկը կբացվի ու իտալացի ազախնի մը գլուխը կերևա ներս։

— Բա՛շի, նախագահության աթոռին նստե, մինչև երգամ,— կպռռա Պոզոս-Նուպարը, դռանը սղմվելով։

— Ներողութուն, օրի՛ոյ, քեզ նեղութուն չըլլա՛ սարգիսարկս դիր արդարագատության մինխտրի աթոռին վրա,— կըսե Զիլինգարյանը՝ իր կարտուղը ազգկանը նետելով։

— Իտալացի՛ աղջիկ, Գարիբալդիին ու Մաձինիին քույր. նստիր նախագահության աթոռին վրա՛ ինձի համար,— լացակումած կձայնե մեկը թաշկինակն աչքերուն սեղմելով։

— Առ սա տոպրակս ֆինանսական մինխտրի աթոռին դիր,— կճշա շեմ գիտեր ով։

— Գատրի՛կս, անպաշտոն, բայց կակուղ աթոռ մը,— խոսեց Քաջազնունին։

— Աղջիկ ջա՛ն, աղջիկ ջա՛ն, մեկ նայե մառանին դուր կո՞ղպ է, բանալին ձեռ ինձի,— ձայնեց Շարաֆյանը։

— Կսե՛ւ Ինձի շոպտեք, ես Տուն եկողը շեմ։ Քիչ մը դրամ ձեռ վար՛ ես կամեամ Եվրոպա,— լավեց Միք. Վարանդյանին ձայնը (հայտնի չէ՛ որ երկրեն)։

Աղջիկը ավելը ցույց տալով հայտարարեց վերեն։

— Սպասե՛ք, սպասե՛ք, դեռ պետք է մաքրվի ներսը, դեռ աղտոտ է։

— Թող ըլլա՛ թող աղտոտ ըլլա, թող ըլլա՛ թող աղտոտ ըլլա,— ձայնեցին վարեն։

Ճիշտ այս միջոցին Անգլիան երեցավ՝ Տան բանալին ձեռքին։ Բաղմությունը ճեղքելով դռանը մոտեցավ։ Բանալին ծակը խոթեց ու ուորեց...

Հոս կանգ կառնեմ ես, ու գրիչս վար կգնեմ։

Վասնդի պատմությունս սկսելուս ձեզ հետ պայման չկապեցի վերջն աշխարհի ամենատոսկալի բաներուն վրա խոսել...

Ապրիլ տասը:

— Այսօր կամ երբեք, — ըսավ Ահարոնյանը, խաշակնքեց երեսը ու Փարիզին հլաւ:

— Այսօր կամ երբեք, — ըսավ Վարանդյանն ու Հոտնեն հլաւ:

— Այսօր կամ երբեք, — ըսին Գյուլիսանդանյանն ու Խատիսյանը ու պատրիարքարանեն հլան:

— Այսօր կամ երբեք, — քիչ մնաց ըսեր Սիրաք Գրիգորյանն ու Երևանեն հլներ, Երբ հանկարծ հիշեց, որ անջատւած է Դաշնակցութենէն...

Ազգային պատվիրակութիւնը կարգադրեր էր. — բռնել Փարիզին Ջենովա սանոզ պիծը, կայարաններուն մեջ շորսական ազգային դործիչներ թողնելով, կիսակայարանները՝ մեկական: Ջենովայի բոլոր հյուրանոցներու և ճաշարաններու մեջ պիտի «աշխատեին» ընկերները հայկական հարցը արծարծելու և ամեն միջոցով մեծ պետութեանց խոստումը իրենց միտքը ձգելու: Այսպէս՝ Ջենովայի Պոն Լիլլո ճաշարանին կերակրացանկին վրա ավելացուցած էր «Հայկական հարցը»:

Պանդակները, որ իջեանելու էին պետութեանց ներկայացուցիչները, առարկաները միացված էին ու կախված բաները վար էին առնվիր «միացյալ և անկախ»-ի միտք դնել ուղիով անոնց մեջ: Ամեն աշքի դարնող պատի կամ ծառի վրա «Հայաստան» բառն էր գրված: Տգետ դործիչ մըն ալ հուշարձանի մը վրա գրոշմեր էր «Հայկական հարց», առանց նկատելու, որ իտալիերեն լեզվով վերը գրված էր «աստ հանգչի»:

Յուզեռը ընդհանուր էր, ուրախութիւնը մեծ: Հայկական դաշտի աշխատավորները կալի վրա էին ու պիտի քաղեին երեսնամյա իրենց աշխատանքին պտուղը: Երկու տարի իրար վրա (Սևա-Կանն) իրենց ցանքսը կալն իջեցուցին ու հարդը միայն վերցուցին:

Ահա այս էր պատճառը, որ առտուն ով իր տեղին հլաւ Ջենովա երթալու՝ «այսօր կամ երբեք» ըսավ: Եւ որովհետեւ այն օր ով տեղեն հլաւ՝ «այսօր կամ երբեք» ըսավ, դրամ ստացավ ու ճամփա ինկավ, այդ պատճառով ազգային պատ-

վիրակության սնդուկը դատարկվեցավ ու դանձադահը ներսի
օդը մաքրելու համար սնդուկին դուռը մինչև երեկո բաց թո-
ղեց:

Իտալական կառավարութիւնը, որուն Անգլիան հանձնա-
րարած էր այս կոնֆերանսը գլուխ բերել, հայկական պատ-
վիրակությանը հատկացուցած էր միայն մեկ սենյակ, առանց
նկատի առնելու, որ պատգամախորութիւնը երկու հատվածի
կբաղկանար ու Պողոսյանները Ապոզոսյաններուն հետ մեկ
սենյակ նստել չէին կրնար: Հասկցնել ուղիցին Իտալիո թե՛
թեև հշմարիտ է, Հայաստանը մեկ է, բայց պատգամախորու-
թյանը երկու, զոր օրինակ... ինչպես... նու, Եվրոպիո մեջ
Շվեդ-Նորվեգիա կրսին մեկ թերակղզու վրա դատկոված
ըլլալուն համար և այլն: Իտալիա ըսավ, որ իրեն անժանոթ
էր այդ հանգամանքը:

Ու Պողոսյան-Ապոզոսյան երկվորյակները ստիպված ներս
քաշվեցան՝ կասկեցտով սենյակը երկուսի բաժանեցին. մեկը
դուռնն կէլներ, մեկը պատուհանն: Ամեն անգամ երբ կաղ-
մակերպիչ մարմնին ապաստվորը փոստար փաշային դիվանա-
տունը կանչելու, դուռն վրա կհարցվեր. ո՞ր փաշային. Պողոս
թե Ռուրեն փաշան է կանչվողը:

Ապրիլի տասնմեկի առավոտ, դիվանապետներու հատկաց-
ված ծածուկ դրութիւնները տանող պաշտոնական թղթա-
տարը Ահարոնյանին ծրարը կտանի Փարիզ՝ վրան մակա-
դրված. «Պաշտոնական և խիստ դաղտնի»:

Ճամփին Քուրքիան մեծ կաշառքով հաշողեր էր բանալ
ծրարը, բայց ժպիտը երեսին ու սոված գումարը ամսոսալով
գոցեր հանձներ էր թղթատարին... Մարը կայարունակեր նա-
մակներ տիկին Ահարոնյանին: Ավետիսը կկանչեր դայն Զե-
նովա, ծովացին օդ շնչելու: Օր մը ետք տիկին Ահարոնյանը
«երեկ կամ երբեք» ըսելով Զենովայի ուղղութիւնը բռնեց:

Նախաճաշին հտքը (ապրիլի 11-ին) Նուբար փաշան ու
Ահարոնյանը անոնց հետ նաև շարք մը ուրիշ հայ էֆենտի-
ներ՝ ներս մտան անգլիական պատվիրակության դահլիճը:
Խորքին նստած էր ծեր անգլիացի դիպլոմատը: Եվ սկսեց
Նուբարը.

— Շնորհակալ ենք: Մեր լսածով Հայաստանի քանի մը
դավառներ պիտի խլվին Քուրքիո ձեռքին:

— Եվ տրվին հայերուն,— ամբողջացուց Ահարոնյանն ու ավելցուց,— ողջ հայութիւնն ավետիք կսպասն ձեր շրթունքին:

Անգլիացի դիպլոմատը թաշկինակը հանեց, շրթունքը սրբեց ու ըստվ պաղ-պաղ:

— Դուք պարտք եք Անգլիային քառասուն, հազար հրացանի և նույնքան ձեռք շորի դին:

Հայ պատգամավորներու վերջին շարքերէն լսվեցին.

— Կուտանք, աղեկ, Յրանսիան մեր 50 հազար փութ քամքանկն է տարեր, անկե կառնենք Կուտանք:

Անգլիան պատասխանեց.

— Դիտեք, ես ալ նեղն եմ. ինքս հասակն առած մարդ: Պետք է մտածեք իմ մասին ալ:

Վարանդյանը տեսնելով որ խեղիւրդ կլրջանա՝ ձեռքը խոթեց դրպանը:

— Ժամացույց կվերցնե՞ք,— հարցուց ու պարզեց:

— Կարելի է.— ընդունեց անգլիացին, աչքն Ահարոնյանի մատանուն սեւոած:— Մատանի-բան չունե՞ք:

— Ոչ,— կմկմալով պատասխանեց Ահարոնյանը:

— Ա՛, կարծեցի մատինդ մատանի է...

— Ասիկա կնկանս հիշատակն է: Կուգես տամ...

— Տուր, ես հանձն կառնեմ քո կինը միշտ հիշեցնել քեզի:

— Առ, միայն մեր հարցը շուտ լուծվի,— ըստվ Ահարոնյանը:

— Իսկ կհիշե՞ս, անցյալ դարնան տունն ու կես եզիպտացորեն տվի քեզ, որին գինը նորեն շեմ ստացեր...

Այս խօսքերի վրա հայ պատվիրակները ետ-ետ քաշվեցին և շքացան:

Այն իրիկուն Ամերիկա կանչեց հայերուն՝ շղնացին, վախենալով իր կաթերի գինը ուզելեն: Շվեդիա կանչեց՝ շղնացին, բերած գութաններու գինեն երկչուղելով: Յրանսիա կանչեց շղնացին՝ կասկածելով, որ իրենց Փարիզի պատգամավորներուն տան վարձը ուզե պիտի:

Հուռ մտազբաղ նստած էին անոնք կապիրտով կիսված սենյակին մեջ, երբ ընթրիքի պատրաստ ըլլալու լուրը բերավ Շարաֆյանը, որ խոհանոցի բաժնի վարիչն էր և իր հասակի երկարութեան բերումով բարձր դիրք էր գրավեր:

Սեղանի վրա ամերիկուհի մը ուշաթափվեցավ իր հանգուցյալ ամուսնու սյուրթուկը տեսնելով Գյուլիսանդանյանի վրա: Ընթրիքեն վերջ Իսպանիան ընկավ իր հարուստ հարևան Ֆրանսիո ետեհն և գնաց անոր սենյակը, նստավ մահճի ժայրին և ըսավ.

— Ֆրանսիա, այս պատերազմին միայն դուն շահեցար... տուփդ տուր սիկարու մը փաթթեմ:

Ահարոնյանը Հունաստանի վարչապետ Գունարիսին մխիթարական տոմս մը գրեց, որուն մեջ մատնանշեր էր, թե այլևս վիճակակից ազդ ենք, քանի որ հիմա «Հունաստան»-ն ու «Հայաստան»-ը երկուքն ալ «հ»-ով կդրվեն նոր ազդագրությամբ...

Կոնֆերանսին աշխատանքները խաղաղ կշարունակվեր: Ահարոնյանն ու իր ընտանիքը կգրոսնեին ծովափին և կկշռվեին՝ ջենովյան առատ սեղանին արդյունքը պարզելու համար: Միայն Պարսկաստանն երրորդ օրը հեռացավ Ջենովայեն. բունեն երևաց որ իր ավանակը, որով եկեր էր կոնֆերանս՝ երևք օր անոթի կապված էր Իտալիո ախոռը ախուր մտացության մեջ: